«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Նիկարմ ՖԱ» ՍՊԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ nikarm-fc@list.ru

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19.11.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Հենրիկ Խաչատրյան
	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	ՍՖԱԲ Ա-013
Խախտում՝	1. «Նիկարմ-Իջևան» թիմի երկրպագուի կողմից մրցակից թիմի ֆուտբոլիստի հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելը (Հավելված 1 Խ, 14-րդ կետ) 2. «Նիկարմ ՖԱ» ՍՊԸ տնօրեն Արմեն Խաչատրյանի կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելը (Հավելված 1 Խ, 20-րդ կետ)
Առաջնություն՝	ՍՖԱ Բ լիգա 2024/25-Ա խումբ
Խաղ՝	«Նիկարմ-Իջևան» - «Դիլիջան Յունայթեդ», 10.11.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 21-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Նիկարմ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով։

1. Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 4-րդ հոդվածի 1-ին կետի 1.5 ենթակետով և 6-րդ կետով՝ 1 ամիս ժամկետով կասեցնել «Նիկարմ ՖԱ» ՍՊԸ տնօրեն Արմեն Խաչատրյանի հանդերձարաններ մտնելու և տեխնիկական գոտում գտնվելու իրավունքը։ Պատասխանատվության միջոցը տարածվում է 2024 թվականի նոյեմբերի 20-ից սկսած։

Հրահանգ՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի՝

Պատասխանատվության միջոցը տարածվում է ՀՖՖ հովանու ներքո անցկացվող Սիրողական ֆուտբոլի մրցումների հանդիպումների վրա։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։